

ՀՆՁԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ԸՆԹԱՑԲԸ.

Եթէ կան հանգամանքներ, երբ մէկ ազգ պէտք է ցոյց տայ բարոյական ոյժ և կամքի զօրութիւն, դա — իր սեփական թշուառութեան ժամանակն է: Եթէ կան հանգամանքներ, երբ մէկ ազգ վհատվում, յուսահատվում ու անբարոյականանում է նաև, դա — դարձեալ իր սեփական թշուառութեան ժամանակն է: Եթէ կան հանգամանքներ, երբ ազգն իր խելքը պէտք է հրկոյզ դարձնէ իր ամեն-մի քայլին և զգացող իր ամեն-մի ցաւը, դա — նոյնպէս իր սեփական թշուառութեան ժամանակն է: Թէ դասն դասերը և թէ լաւագոյն յոյսերը, որ փոփոխակի կերպով առաջանում են իրականութեան մէջ, նա պէտք է ընդունէ հանդարտ լրջմտութեամբ և ջանայ որոշել ու առաջնորդել իր ընթացքը շարունակաբար իր կեանքում ծագող նորանոր հանգամանքների համաձայն: Փքուն Ֆրանսերը, ծառան բացականչութիւններն ու կոչումները պէտք է համարվեն եթէ ոչ քնասակար, գէթ շատ աւելի անտեղի ու աւելորդ, քան երբ և է: Միտքը, գաղափարը միայն և զրանց թելադրած ուղղութիւնը գործնականի մէջ, յայտնի հանգամանքների ներկայութեան, պէտք է այդ ժամանակ առաջ դան իրանց ամբողջ անկեղծութեամբ, իրանց ամբողջ պարզութեամբ, իրանց ամբողջ կենսունակութեամբ: Արովհետև հէնց այն դառն ժամանակներին, երբ միտքը սպառնում է աւելի մթապնել, ամենանհրաժեշտ պէտքն է զգացվում, որ նա լինի կատարելապէս արթուն:

Այս տաննախնեքորդ, քաղաքակիրթ կոչված, դարը վկայ է եղել շատ մարդկային աղէտների, և հայկական կոտորածներն անցել են ֆրանսական, լեհական, յունական սոսկալի կոտորածների շարքը, զրանց հետ միասին ներկայանալով ամենատարիւնաշատ ու ամենատառաջալի շերտը նորագոյն ու ժամանակիս պատմութեան: Եւ սակայն դա չէ կարող պատճառ լինել արդարացի ման յուստեսի, վհատվածի ազդաստիճանի կոկոռների և զիմակաւոր ազդասէրների — որոնց թիւին է այսօր լէգէօն — կոկորդիլոսեան արցունքները՝ թէ հայ ազգը սպառնեցաւ, թէ նա այլ ևս կորուսէ: Եթէ մեծ աղէտներն առաջացնում են

մեծ յուսահատութիւններ, նրանք նաև պատճառ են դառնում աւելի մեծ դէպքերի ու ձեռնարկների երևան գալուն և աւելի մեծ ջանքերի գործադրութեան:

Այն հսկայական ու սոսկալի կռիւր, որ այնպիսի դժուարութեամբ և այնպիսի հսկայական ջրկանքի դնով մղում է հայ փոքրիկ անպաշտպան ու անզօր ժողովուրդն ընդդէմ իր անհամեմատ աւելի հզօր ու մեծ թշնամու — մի պատմական կռիւ է, որ ճակատագրական կերպով առաջ եկաւ նրա կեանքում: Ճակատագրական, այսինքն մի կռիւ, որի ծագումը պատրաստվում էր մեր կեանքի պայմանների շնորհով ամբողջ տասնեակ ու տասնեակ տարիների ընթացքում և որ պէտք է պայթէր անհրաժեշտաբար հէնց այն պատճառով, որ նա դարձել էր մէկ ազգային ներքին, կենսական պահանջ: Արքան տհաս մտքի տէր են նրանք և կամ ազէս՝ հայ ժողովուրդի վիճակի մասին, որոնք չեն ուզում ընդունել, որ այդ կռիւր պատմական մէկ անհրաժեշտութիւն էր դարձած արդէն երեսուն, քառասուն և աւելի տարիներից ի վեր: Ներկայ սերնդի հայրերն ընդհանրապէս չը կարողացան այդ անհրաժեշտութիւնը հասկանալ, և իրանց ժամանակն անցնելով ինտրիգների, վատութիւնների և կամ ազգային աննպատակալարմար — և միշտ անձնական շահախնդրական տեսակետից տրամ — ձեռնարկների զբաղումով, ի վերջոյ իրանց պատմական ծանր ու պատասխանատու պարտականութիւնը կտակ թողին իրանց զաւակներին — ներկայ երիտասարդ սերնդին, — սրա շարունակ կարմիր արիւնով ներկելով տակաւին հէնց նոյն իսկ օրօրօցից: Այդ եղանակով մի յանցաւոր, արիւնալի կտակ, որպիսին այս դարուս մէջ ոչ մի երկրում հայրերը չեն թողել իրանց որդիներին: Այդ եղանակով ընդհանուր առմամբ հայրերի պատմական գործը: Եւ տարօրինակ ծաղր. այսօր զիսաւորապէս նոյն այդ յանցաւոր հայրերն են, որ ամենից կատաղի կերպով մեղադրում են իրանց որդիներին — ինչո՞ւ. — որ այս վերջինները ծրգնում են կատարել հօրենական կտակով նախադրած պատմական յեղափոխական պարտականութիւնը:

Առիւր հսկայական է: Ակսիւսը եռանդով և մղված ոգևորութեամբ՝ տարիների ընթացքում նա անցաւ այնպիսի շրջաններ, երբ հարուածներըն ու նպատակի իրականացման յոյսերը միմեանց հետ մրցում էին մի կատաղի մենամարտութեան մէջ և փոփոխակի կերպով միմեանց խորատկում ու յաղթում: Եւ այդ սուրբ ճիգերում յանուն մի սուրբ նպատակի՝ անագորոյն հանգամանքները վրայ հասնելով, վերջին լուսէին հարուածները տեղացրին յոյսերի վրայ, թէ և այդ կոխն առաջ բերեց ազգի մէջ մի բարոյական կատարեալ վերածնութիւն ու մեծ ինքնաճանաչութիւն: Ղա է լուսէն, որ անցնում ենք այսօր:

Բայց մինչև այդ լուսէին հասնելը շատ հանգամանքներ փոխվեցան, և այսօր այդ հանգամանքները յեղափոխական գործունէութեան համար այլ ևս բոլորովին այն չեն, ինչ էին սրանից ինք, հինգ, երեք, մինչև իսկ մի տարի առաջ: Այդ հանգամանքները յիշեն փոխվել են, և եթէ նրանք աւելի դժուարին են դարձել՝ մի կողմից, միւս կողմից՝ ընդհատակը, աւելի պարզվել ու որոշվել են և նոյնպէս շատ աւելի որոշ կերպով են դժագործում գործունէութեան սահմանն ու պայմանը:

Եթէ գործունէութեան սահմանն ու պայմանը փոխվել են նոր հանգամանքների շնորհով, և փոխվել են՝ ընդունելով աւելի ընդարձակ ծաւալ ու բնաւորութիւն, հասկանալի է, որ այդ գործունէութեան միջոցներն ու եղանակներն էլ պէտք է նմանապէս համապատասխան լինեն այն նոր հողին, որի վրայ փոխադրվել է յեղափոխական գործունէութիւնը: Ղա խիստ կարևոր, ամենաէական նշանակութիւն ունեցող մի կէտ է, որ պէտք է ամենալուրջ քննութեան և ուշագրութեան առնվէ: Ղան յեղափոխական այլ և այլ միջոցներ, որոնց գործադրութիւնն անհրաժեշտ էր սրանից իսկ մօտ մի տարի առաջ, և այդ միջոցները գործի համար ունէին իրանց նշանակութիւնն ու արդիւնքն այն ժամանակ. մինչդեռ այսօր նրանք յայտնվում են ոչ բաւականաչափ զօրաւոր: Ղերկայ իրականութիւնն ինքը առաջացնում է գործունէութեան մի ձևափոխված ընթացքի թելադրութիւն, որ յեղափոխականները պէտք է լաւ քննեն ու ըմբռնեն: Ամենաառաջին պայմանն այդ ընթացքի այն է, որ պէտք է տեղի չը տալ այնպիսի դէպքերի, որոնք որոշ ու շօշափելի իրական օգուտ չեն առաջացնում: Եկրորդ պայմանն այն է, որ յեղափոխական ձեռնարկները պէտք է նշանակութիւն ունենան ոչ միայն խորութեան տեսակէտից, այլ և տարածութեան, այլ խօսքով, ոչ միայն իրանց ներքին իմաստով, այլ և իրանց ծաւալով, իրանց ընդարձակութեամբ:

Այդ գործը դժուարին է, բայց անկարելի չէ: Մեր ազգային ոյժերն ընդունակ ու կարող են այդ գործը գլուխ բերելու, եթէ միայն նրանք կազմակերպվեն ու առաջնորդվեն նպատակայարմար, որոշ ու հմուտ կերպով: Այդ դէպքում մենք կարող ենք՝ փաստ հ լինել մեր յաղթանակի վրայ: Ղիշ է, հայ ազգը ծանր կորուսաներ ու աղէտներ ունեցաւ այս վերջին տարւայ ընթացքում, բայց այդ հարուածները, հսկա տի իրանց վայրենի ուժգնութեան, չը սպառեցին ու չեն կարող սպառել հայ ազգային ոյժերը: Այդ հարուածներից, վերջին հաշւով, դարձեալ հայը վատասեց և մեր թշնամին է, որ մեծապէս վնասեց. մէկ ամբողջ ժողովրդին, մինչև սրա ամենամութ խաւերը, մինչև սրա սրտի ամենաճածուկ զգացումները, նա, թշնամին, դարձրեց յեղափոխական: Այդ հսկայական գործն անկարելի էր լով յեղափոխական ազխտացիայով իրագործել երկար տարիների ընթացքում անգամ. մինչդեռ շամիւն ինքն իր բարբարոսութեամբ յանձն առաւ մասուցանել ազգիս այդ մեծ, թէ և խիստ դառն ծառայութիւնը: Ղառայութիւն, այս. — նա ամբողջ հայոց կեանքը, սրա բոլոր երեւոյթներում, դարձրեց յեղափոխութեան մի մշտապատ հնոց, որ այլ ևս անկարող է մարել, մինչև որ չիրագործվեն յեղափոխական պահանջները, որոնց այլ ևս անհանդուրժելի անհրաժեշտութիւնը դարձել է մեր կեանքի հիմնակէտը:

Եւ ամբողջ մերկութեամբ, դատնութեամբ ու ահաւորութեամբ հանդերձ՝ հայկական իրականութիւնն այսօր աւելի, քան երբ և է, նպատաւոր է յեղափոխութեան: Բայց այդ պարագան պէտք է գործածվէ ամենահմուտ ընթացքով. պէտք է իմանալ հարկաւոր եղանակներով նրան ծառայեցնել յօգուտ մեր ազգային ձգտումների, մեր դատի. պէտք է իմանալ նրա համեմատ ուղղութիւն տալ ու առաջնորդել ազգային ոյժերը: Ղա մի դժուարին գործ է, բայց և մեծ գործ է: Ղա մի հսկայական աշխատութիւն է, որ պահանջում է ազգի ամենաեռանդուն աջակցութիւնը, բայց և մի յուսալից գործ է, որից կախված է հայութեան փրկութիւնը: Ղա մի նոր դրութիւն է, որ թարմացնում ու պարարտացնում է մեր դատի հողը և խոստանում այդ դատին աջող ելք:

Ղնենք այդ նոր հանգամանքները և նրա համեմատ որոշենք մեր յետադայ գործունէութեան ընթացքը, — և այն ժամանակ կարող ենք փաստ հ լինել մեր յաղթանակի վրայ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԷՅԹՈՒՆԻՅ

Ձէյթուն, 1 յունիս 96.

Ընդունուած պայմանագրի համաձայն Հնչակեան գործիչներու մեկնելէ յետոյ հաղի մի քանի շաբաթ-ւայ մէջ հիւպատոսների միջնորդութեամբ հաւաք-ուեցան Զօրանոցէն գրաւուած մարմինի հրացաննե-րըն և յանձնուեցան թիւրք կառավարութեան, որպէս և թնգաթի մէկը, իսկ միւսն այրուած էր Զօրա-նոցի հետ: Փամբուշտներ ևս պահանջուեցան, սակայն փամբուշտների փոխարէն մասնացոյց արիւր սպան-նուած կամ վիրաւորուած հազարաւոր թիւրք զին-ւորներն ու պաշտպանները:

Եւսէմ փաշան առաջարկեց զինուորներ ուղար-կելով քաղաքի փողոցների մէջ եղած դիակներն ու անմաքրութիւնները հաւաքել, մաքրել և ուրիշ ծա-ռայութիւններ անել տալ. սակայն Ձէյթունցիներս մի թաքուն նպատակ տեսնելով այդ առաջարկի մէջ և մանաւանդ չուզելով թիւրք զինւորներ մասնել քաղաքի ամեն անկիւնները, մերժեցին և իւրաքան-չիւր թաղերի մաքրեց իր թաղի անմաքրութիւնները:

Հաշտութիւն անմիջապէս յետոյ հիւպատոսները ջա-նացին օգնել բոլոր կարօտեալներին, ազգայններին և հիւանդներին. ժողովոյի հանգստութեան և առողջու-թեան համար կարելի եղած կարգադրութիւններն ու աշխատութիւնները անել: Փետրվարէն սկսած հիւպա-տոսներն ամեն օր քաղաք կիջնէին այդ կարգադրու-թիւնների համար, որոնց մէջ անկիւնական և խաղա-կան հիւպատոսների ջանքերն անուրանալի են: Այդ ան-կիւնները ցուրտի և անթութեան պատճառով փոր-հարութիւն, թիֆո որպէս երեխայոց հիւանդու-թիւններ սկսած էին ճարակիլ ժողովոյի մէջ: Հիւանդութիւնը սոստկացաւ փետրվար և մարտ ա-միսների մէջ և օրական 20-30 զոհեր կը տանէր. սակայն վերջերս բոլորովին անհետանալու վրայ է շը-նորհով ձեռք առնուած նախազուշտութիւնների և խը-նամքների: Այս միջոցին Էսէմ փաշան աշխատեցաւ այդ հիւանդութիւնը քրքրայի վերագրելով գարան-թիւններ հաստատել տալ, որով Ձէյթունը կտըր-ուելով հաղորդակցութենէ, չը կարողանայ հարկ եղած օգնութիւններն ու նպաստները ընդունել. սակայն հիւ-պատոսները և Տօթ. Շանբերթը, որ նոր էր հասած Ձէյթուն, ընդդիմացան Էսէմ փաշային և ուրիշ բժիշկների հետ միասին քննելով հիւանդութիւնը, հաւաստեցին թէ գոլէրայ գոյութիւն չունի Ձէյթունի մէջ, որով չը յաջողեցաւ փաշայի չար մտադրութիւնը:

Ամեն առաջ հիւպատոսները բոլոր գիւղացիներին, կարօտեալներին և հիւանդներին առանձին-առանձին բաժանեցին մօտաւորապէս 3-400 ոսկի: Եւստով հի-ւանդանոցի վերածուեցաւ Միացեալ ընկերութեանց դպրոցը, որը բաւական ընդարձակ մի շէնք է: 100-ի մօտ անկողիններ զետեղուեցան այդ դպրոցի մէջ, ուր կը խառնուէին մշտապէս այդչափ հիւանդներ: Նախա-պէս բժշկութեան վերաբերեալ բոլոր ջանքերն և կար-գադրութիւնները կը կատարէին Տօթ. Շանբերթը և իսպական մի բժիշկ, որը եկած էր իտալական հիւ-պատոսի հետ: Տօթ. Շանբերթի մատուցած ծառայու-թիւններն անմոռանալի են. օրական կայցելէր մօտաւո-րապէս 200 հիւանդների և շատ անգամ ինքն անձամբ կը հոգար և կը դարմանէր պատերազմի ատեն վիրա-ւորուածների վէրքերը: Դեղերը և այլ և այլ պէտքե-

րը կը հոգացուէր առատօրէն և ձրի: Վերջերս հա-սան չորս բժիշկներ ևս:

Անգլիական հիւպատոսը տեղոյն յայտնի անձնաւո-րութիւնների առաջնորդութեամբ պտտուելով իւրաքան-չիւր տուն, իւրաքանչիւր անհատի մէկ մէկ մէժիտ անխը-տիր բաժանեց, նմանապէս իտալական հիւպատոսը: Ամե-րիկեան միսիօնար մըստըր Մէքլէմի միջոցով օրական կանոնաւոր կերպով բաշխուեցաւ և կը շարունակուէր բաշխուել 4-500 հօխա ալիւր, իւղ, ղգեսա և մաս-նաւորապէս դրամ:

Մարտի վերջերս Ենիճէ-Վալէի, Գընուզի, Մը-խալի և ուրիշ մօտակայ գիւղերի բնակիչները տեղա-ւորուեցան իրենց տեղերը. իսկ Կօկիսօնի, Կապանի և այրուած գիւղերի բնակիչները դեռ կըսպասեն Ձէյ-թունի մէջ: Այստեղ հարկ կը համարենք ասել թէ բանակցութիւնների ժամանակ սուլթան Համիտը Ձէյ-թունցիներին կրած վնասների հատուցման համար, մեր կողմէ եղած պահանջների փոխարէն, խոստացած էր պաշտօնապէս «կայսերական մի շնորհ» անուան տակ, 6,500 ոսկի նուիրել. սակայն մինչև հիմայ դեռ չէ կա-տարած իր խոստումն և կատարուելիք ալ չունի:

Վերջերս Ձէյթուն կը գտնուէր մօտաւորապէս 30 վաշտ զինւորներ, որոնք իրենց վրաններով կը բնակուէին քաղաքէն կէս ժամ հեռաւորութեամբ վայրեր: Երբ օդերը բացուեցան հրամանատար փաշան Կարկալար թա-ղի կողմը գտնուած վաշտերը փոխադրել տուաւ Զերմուկի դաշտը, որոնք սկսան շինել Ձէյթունի և Մարաշի մէջ մի շօսէի ճանապարհ: Սաստիկ ծանր էր թիւրք զինւորների աշխատութիւնը, բոլորո-վին դժգոհ էին իրենց կատարութեան դէմ և միշտ հայհոյալքներ ու անէծք կը թափէին սուլթանի գլխին:

Ձէյթունի հետ միևնոյն ժամանակ հիւանդութիւնը աւելի սոսկալի կերպով տարածուած էր և թիւրք զինւորների մէջ. ընդհանրապէս բոլոր զինւորներն որ և է տեսակ վտանգաւոր հիւանդութիւն էին ստացած և ամենքը կը հազային: Օրական 50-60 և երբեմն 100 զինւոր զոհ կը գնային նոյն հիւանդութեան: Այնպէս որ Ձէյթունի շուրջը 4-5 ժամ հեռաւորու-թեամբ չի կայ մի գետին, ուր թաղուած չը լինի թրքական զինւորների բազմաթիւ դիակներ: Ապրիլ ամսի մէջ առանձին հրամանով վաշտ-վաշտ թրքական զինւորները հեռացան Ձէյթունէն. յետոյ իմացանք, որ Կրէտէի և Տիւրքիների մէջ նոր ապստամբութիւն երևան եկած լինելով՝ զինւորներն ուղղակի հոն կը քշուեն: Այժմ Ձէյթուն կը գտնուեն 3 վաշտ թիւրք զինւորներ միայն, որոնք կը բնակուեն վրանների տակ. Էսէմ փաշան ևս մեկնեցաւ վերջին վաշտի հետ:

Մարտի սկիզբները տեղա եկաւ, իբրեւ գայմազամի փոխանորդ, Մարաշցի Մահմուտ Էֆէնտի անունով մի թիւրք: Ձէյթունցիներս յիշելով բանակցութեան պայ-մանները, բոլորովին դժգոհ մնացած թիւրք կառավա-րութեան սոյն խաբերայ ընթացքի դէմ, բողոքեցինք հիւպատոսներին և մեր յայտնի իրաւունքների գոր-ծադրութիւնը պահանջեցինք: Չը գտնուեցաւ ոչ մի Ձէյթունցի, որ դիմէր որ և է գատի կամ խնդրի հա-մար այդ գայմազամի փոխանորդին: Առանց կառավա-րութեան շէնքը վերանորոգելու կամ մաքրելու, վար-ձեց քաղքի քովը մի տուն, ուր կը մնայ մի քանի ոս-տիկաններով բոլորովին անկարելու և անպատիւ վիճակի մէջ: Այս առթիւ Ձէյթունցիներին արած նկատողու-թեան համար հիւպատոսները հանգարտեցուցին ժո-

զովուզը ասելով, թէ այս անձը ժամանակակից գայ-
մագամ է և հաստատեցին, թէ Զէյթունի մէջ պիտի
հաստատուի քրիստոնէայ գայմագամութիւն:

Զէյթունի շրջակայ մի քանի գիւղի թիւրքե-
րը դեռ չեն վերագործած, իսկ Զէյթունի մէջ գրո-
նուած 30 տան չափ թիւրքերը հասկանալով, որ
քրիստոնէայ կառավարիչ պէտք է հաստատուի, ձգե-
լով իրենց բոլոր կողմաները, տները և յն. ոմանք
բոլորովին գաղթեցին և ոմանք այ գաղթելու վրայ են
Զէյթունէն:

Քաղաքիս մէջ մինչև այժմ պատահած կարևոր
դէպքերէն մի քանիսն են: — Մարտ ամսի սկիզբնե-
րէն Էֆէմ¹⁾ փաշան շրջակայ գլխաւոր գաւառների,
օրինակ, Էլպիստանի, Կօկիսօնի, Անսրլնի և այլնի թիւրք
և չէրքէզ պետերը, քէհաններն ու միւսիւրները հա-
ւաքելով Զէյթունի մէջ, առաջարկեց հաշտութիւն
կայացնել և այս կերպ որոշուեցաւ, որ այսուհետեւ
զէյթունցիների և դրացի մահմետական բնակիչների
մէջ համերաշխութիւն լինի և ինչպէս ապստամբութե-
նէ առաջ, նոյնպէս այժմ կանոնաւորապէս վերսկսեն
յարաբերութիւնները, երթևեկութիւն և առևտուր:
Աստահելով սոյն ձևակոնութեան վրայ, հետեւեալ
օրը 12 Զէյթունցի ջորեպաններ ճանապարհ ընկան
Էլպիստան ցորեն բերելու համար. սակայն Էլպիստա-
նի քաղաքի մէջ մեր ջորեպաններէ 9-ը հատը զոհ
գնացին թիւրք խուժանի Փանատիկոսութեան: Յերեկ
առեւ, կառավարական օստիկանների և պաշտօնեաների
ներկայութեանը, տեղացի թիւրք հասարակութիւնը
ժողաւրապէս 500 հոգի կը յաւաքէին հայերի գրա-
նուած պանդակի վրայ, կոտորելով դռները ներս կը
խուժեն և շարաշար կերպով կըսպանեն անոնցմէ 9-ը
հոգին: Սոյն դէպքը շատ վատ ապաւորութիւն թողուց
և այդ օրեր ամբողջ Զէյթունցիները սաստիկ գրգռու-
ած վիճակի մէջ էին:

Այս դէպքէ մի քանի շաբաթ յետոյ, թիւրք
օստիկանները քաղաքին մէջ բռնի ձերբակալել ուղե-
ցին «Աօ» զօրագնդի զինւորներէն Փայլակ և Կա-
րուճ անունով Այնթապցի հայերը, որոնք դեռ այս-
տեղ կը գտնուէին: Զէյթունցիները յարձակուեցան օս-
տիկանների վրայ և լաւ ծեծ տալով ձեռքերէն առին:
Մի քանի օր յետոյ, փաշայի խնդրքի վրայ, հիւ-
պատանքը Զէյթունցիներէն խնդրեցին յիշեալ Այն-
թապցի հայերն և վստահացուցին ապահով կերպով
իրենց տեղը ուղարկել:

Մայիսի սկիզբները Զէյթունէն իր տեղը վերա-
դարձաւ յայտնի կարաւանապետ Մարաշի հաճի Մա-
նուկ քէշիշեան անուն անձը, որը յեղափոխութեան
սկիզբներն ապահովութեան համար ապաստանած էր
Զէյթուն: Հաճի Մանուկն երբ Մարաշ կը հասնի,
թիւրք կառավարութիւնը կը բանտարկէ և շատեր ալ
կուգն սպաննել: Զէյթունցիները լսելով անոր բան-
տարկութիւնը, գրգռուած կը դիմեն Էֆէմ փաշային
ու հիւպատոսներին և կը պահանջեն անմիջապէս հա-
ճի Մանուկի ազատ արձակուելը, հակառակ պարա-
գային ծանր սպառնալիք կը կարգան: Փաշան զգու-
շանալով որ և է նոր դէպք տեղի ունենալէ՝ Զէյ-
թունցիների ներկայութեանը հեռագիր կըտայ Մա-
րաշի կառավարութեան, որով հաճի Մանուկը նոյն օրը
ազատ կը թողուի:

Այժմ հիւանդութիւնները գրեթէ անհետացած
են. ժողովուրդը ակնդէտ կըսպասէ պայմանների գոր-

ծադրութեան: Մըթըր Մէքալէմի միջոցով ամեն օր
կանոնաւոր կերպով կը շարունակուի բաշխուիլ ա-
լիւր, իւղ, հագուստ, դրամ և այլն: Չր յուսա-
ցուած արժանութիւն կը տրէ Զէյթունի մէջ. Մա-
րաշի, Էլպիստանի, Կօկիսօնի թիւրքերը լսելով, որ
Զէյթունի մէջ դրամի առատութիւն կը տրէ, ամեն
կողմերէ լեցուցին ցորեն, ալիւր, և այլ և այլ հա-
ցարոյսեր:

ՀԻՊԵՀ.

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԶՈՒՄԱՐՋՈՒԱՆԻ.

(Շարունակութիւն) *)

Երբ հաշտութիւնը կը կայանար, մի քանի հա-
զարի չափ կանոնաւոր զինւորներ և 5 հազարէ աւելի
պաշտօնագիր կը գտնուէին գիւղի շուրջը և պաշար-
ման մէջ առած էին մեզ: Այդ ատենները գիւղի գնի-
ուած երիտասարդութիւնը իր ղեկավարողների հետ ա-
պաստանած էր լեռները, իսկ ազա դատակարգը՝ վախ-
նալով իրենց կեանքէն, Ֆէրիզ փաշայի գիրկը նետ-
ուած էր ազատելու յուսով: Աղաներէն մի քանիսը,
որոնք մասնութեան ամենակեցողութեան կատարեցին
Չոր-Մարգուանի բոլոր կոիւնները և դէպքերու միջո-
ցին, այս անգամ ևս նոյն ընթացքը ունեցան՝ իմաց
տալով փաշային թէ գիւղի մէջ գնուած երիտա-
սարդութիւնը չէ մնացած և խորհուրդ ևս տուին թէ
մի յարձակուով կարելի է գրաւել ամբողջ գիւղը:
Ֆէրիզ և միւթեսարը՝ փաշաները, որոնք սրաւորուստ
հաշտութիւն կայացնելու կաշխատէին, այդ ատեն
թիւրք խուժանին գաղտնի կերպով գրգռած են, որ
յանկարծ գիւղի վրայ յարձակուեն: Հետեւեալ օրը
կանուխ պաշտօնագրուները արշաւեցին գիւղի վրայ Գա-
րա-Ֆիլիսէի կողմէն: Շրջակայ տները այրելով և մե-
ջը գտնուածներն ալ թալանի տալով կը յառաջանա-
յին և յոյս ունէին նախորդ կոիւններու մէջ սպան-
նուած թիւրքերու վաճճելու ծեծել: Սակայն հայ երիտա-
սարդութիւնը գուշակելով թիւրք փաշաներու խորե-
բայութիւնը՝ գիշերանց անտառներու և պատնէշներու
ետի կանգնած կապսէին վերջին անգամ մի կոիւ ևս
ունենալու համար: Մինչ այդ ահագին խուժքը կը
մօտենար գիւղը մտնելու, յանկարծ թաքուստի մտած
հայ քաջերու հրացանները պայթեցան: Մէկ ու կէս
ժամու չափ տաք կերպով կոիւ ունեցանք և թիւր-
քերը սպանուածներ թողնելով կուի դաշտի վրայ սար-
սափահար յետ քաշուեցան:

Սոյն վերջին յաղթական կոիւը շատ նպաստեց
մեր վիճակի բարոյութեան և թերեւ ամբողջ Չոր-Մար-
գուանն ընդհանուր կոտորածէ զերծ պահեց, ինչ որ յե-
տոյ լսեցինք հայ աղաներու և թիւրքերու բերանէն: Թիւրք
փաշաները, որոնք նախապէս չէր կարծէին թէ աղա-
ները և անդէն հասարակութիւնը անձնատուր առնի-
լով, 40-50-ի չափ հրացաններ հաւաքելով այլ ևս
զիմադրող ոյժ չմնաց մեր մէջ, այդ ատեն լաւ աե-
սան իրենց սխալ հասկացողութիւնը և այնուհետեւ
հայերի հետ իրենց յարաբերութիւնն աւելի քաղա-
վարի էր, իսկ պահանջները շատ քիչ էին: Այս կըու-
ուէն առաջ փաշաները կը պահանջէին մեզմէ բո-
լոր մեծ ու փոքր հրացանները, մի քանի հարիւր օ-
խա վառօթ և այլն, որպէս և կուղէին ձերբակալել

1) Տես «Հնչակ» թ. 14:

35-ի չափ յայտնի երիտասարդներ, որոնք 200-Մարզուանի կոիւնների մէջ մեծ գեր էին ունեցած. սակայն կուէն վերջ ոչ միայն սոյն պահանջները չեղան և ոչ մի ձեռնարկում տեղի չունեցաւ, այլ նաև աղաներէն հաւաքած 80-ի չափ հրացաններն ևս վերադարձուցին մեզ:

Վերջնականապէս հաշտութիւնը կայանալէ և պէտք եղած կարգ ու կ'սնունը հաստատուելէ յետոյ, թիւրք կառավարութիւնը հայ աղաներէն պահանջեց մի քանի երիտասարդներ, որոնք թիւրք զինուորների հետ գիշերները պիտի պատուէին գիւղի մէջ՝ հայերու պաշտպանութեան համար: Զինուորներն առանձին չէին կարող պատուել ճանապարհները չը գիտնալուն պատճառով: Թէպէտ զինուորներու պահպանութեանը պէտք չունէինք, որովհետև գիւղի բնակիչները բոլորը հայեր են և ոչ մի թիւրք չը համարձակիր գիւղ մըտնել փնտսելու նպատակով: Մենք լաւ գիտէինք թէ՛ կառավարութեան նպատակը մեզ պահպանել չէ. նոյն կը փափայէր որևէ կերպով մի կողմը անել այս տեղ ևս կամ կարևոր անձնաւորութիւններ ձեռքաւարելով գիւղէս հեռացնել. սակայն մենք միշտ պարտաւորուած էինք զգոյշ լինել և չընկնիլ իր թակարդի մէջ:

Հաշտութենէ ետք օր յետոյ ճէպէլի մի թէսարիֆը վերադարձաւ իր տեղը, իսկ Ֆէյիք փաշան գեկտեմբերի վերջերը միայն մեկնեցաւ դէպի Աստանա: Գիւղիս մէջ մշտապէս կը գտնուէին 1,000-ի չափ կանոնաւոր զինուորներ, որոնք 200-Մարզուանը գրեթէ պաշարման վիճակի մէջ գրած են: Երեք հարիւրի չափ զինուորներ կը բնակուէին շուկայի մօտ մի քանի պանդոկներու մէջ, մնացածները մի քանի մասի բաժնուած գիւղի եղբրերը՝ այլ և այլ յարմար տեղեր՝ վրաններու տակ կըսպասէին: Էօզլըլի և Օճապլը գիւղերու բնակիչները, որոնց թիւը 500 տան չափ կը հասնի, յարձակումներու ժամանակ թիւրքերու կողմէ այրուած լինելով իրենց բնակարանները և գոյքերն ալ թալանուած, այժմ կը գտնուին 200-Մարզուան բոլորովին մերկ, անօթի և արգահատելի վիճակի մէջ:

Վ.

ՆԱՄԱԿ 200-ՄԱՐԶՈՒԱՆԻՑ.

200-Մարզուան, 25 մայիս 96.

Այս ձմեռ շատ ծանր եղաւ 200-Մարզուանի հայերու վիճակը: Անցեալ տարւոյ դէպքերը, կոիւնները և կառավարութեան աւերիչ ընթացքն արդէն նիւթապէս ամենաստոր աստիճանի էր հասուցած տեղիս ժողովուրդը: Երջակայ մի քանի հայ գիւղերու բնակիչները, որոնց աները այրուած և ուսելիք բոլորովին զրկուած լինելով, ապաստանած էին այստեղ, իրենց այդ կացութեան պատճառով թշուառութիւնն ու անօթութիւնը աննկարագրելի էին դարձած: Մինչև մարտ ամիսը ոչ մի հայ չէր կորողացած գիւղէն դուրս մեկնել դէժ ուտելիք ձարելու համար: Երբ ջակայի թուրք և քուրդ խուժանը, որոնք երգուած էին առաջները, մեր գիւղը հիմնայաօտակ անել, այժմ այդ անկարող լինելով, կաշխատեն ամեն միջոցներով իրենց վրէժը լուծել, մանաւանդ յայտնի տեղերով կառավարութեան և պաշտօնեաներու քաջալերութիւնը:

Գարնան սկիզբները կառավարութիւնը հարստահարութիւն ու կեղերումները աւելի ևս խտացուց: Գի-

շեր ցերեկ բազմաթիւ զինուած թուրք զինուորներ գիւղի շուրջը լրտեսելով կը պատուէին: Ժողովուրդի մէջ յարաբերութիւնը գրեթէ դադրած էր: Զինուորները իրենց կամքի համաձայն կը ձերբակալէին հայեր, և և է զրպարտութիւններ վերագրելով յայտնի չափով դրամ կը կորզէին և ապա աղատ կը թողէին:

Զմեռը դեռ վերջացած չէր, կառավարութիւնը բռնութեամբ ստիպեց նաև որ Էօզլըլի և Օճապլը բնակիչներն իրենց գիւղերը վերադառնան և այնտեղ կամ բացօդայ տեղեր բնակեն և կամ դրացի թուրքերու տները մնան մի ժամանակ, նաև պահանջեց, որ տուրքերը հաւաքուել սկսեն:

Աւետուրը և ապրուստի միջոցները բոլորովին վրկուած ու կտրուած են: Ժողովուրդի անմիջական յոյսն էր նարնջի ծառերը, սակայն մօտակայ հայ գիւղերու բոլոր պարտէզներն ու նարնջի ծառերը կտրուած են և միմիայն ողջ կը մնան 200-Մարզուանի նարնջիները, այժմ 1000 նարնջը 10 դահեկան արժէք ունի և այն ալ չը ծախուիր: Կառավարութեան և թուրք խուժանի սոյն անբարոյական ընթացքը թէպէտ անաւանելի է, սակայն աւելի ծանր է անօթութիւնն ու թշուառութիւնը: Տեղիս հայ ժողովուրդը երբէք չէ վախենար կեղերումներէ, թրքական հարստահարութենէ և կամ կուէլէ, ինչքան իր անտեսական ներկայ տեղ դրութենէն: Անցեալները Պոլսի Պատրիարքարանի կողմէ մօտաւորապէս 100 ոսկի և Կարմիր Խաչի ընկերութեան կողմէ 40 ոսկու չափ գումարներ նպաստ ուղարկուեցան. սակայն իւրաքանչիւր տան հաղու 15-20-ական դահեկան բաժին ընկաւ: Այն նպաստները ոչ միայն անմիջական կեանքի պէտքերու դարման չեն լինիր, այլ և աւելի թշուառութեան պատճառ դարձան: Նպաստներու բաշխուիլէ մի քանի օր յետոյ թուրք պաշտօնեաները, մուխտարները հայերէս այդ զրաւները յսիշտակեցին տուրքի փոխարէն: Անբարոյական հարկահաւաքները չէին ուզեր հաւատալ, թէ իւրաքանչիւր տան 15-20-ական դահեկան է բաշխուած, այլ իրենք կը պահանջէին կրկնապատիկը:

Մարտ ամսի սկիզբներն ամեն օր թուրքերու կողմէ տեղի կուէնային նորանոր դէպքեր, աւերադատութիւններ, իրենց գիւղերը վերադարձող Հայերու մնացած ապրանքներու թալանում և այլն: Այս բոլորն արդէն Հայերու մէջ ծայրայեղ դժգոհութիւն էին յարուցած, երբ յանկարծ Էրզինի և Օճապլըի մօտերը մի քանի Հայեր սպաննուեցան թուրքերու կողմէ: Հայերը գրգռուած և կատաղած անոնց գիւղերը տարին զինուորական գայմագամի ու հաղարապետի առջև և պահանջեցին անմիջապէս ռմբակոծներու պատժուելը: Թուրք զինուորականները այլ և այլ առաւելութիւններով աչք գոցեցին և անպատիժ թողուցին այդ քապանողները: Այս վերջին դէպքերը գուցէ ծանր հետեանքներ առաջացնէին և նոր կոիւններու ու արխնահեղութեան պատճառ դառնային, սակայն ճէպէլի նորընտիր միւթէսարիֆը իմանալով, ածապարանօք ինքը 200-Մարզուան եկաւ և աշխատեցաւ անուշութեամբ վերջացնել:

Հայերուս դժգոհութիւնն ու գրգռութիւնը հանգարեցնելու համար միւթէսարիֆը իր գալէ յետոյ առաջին գործն եղաւ՝ անմիջապէս շրջակայ թուրք գիւղացիներէն մի խումբ երիտասարդներ ձերբակալել և Փայասի բերդը ուղարկել, իրր նախորդ ուղանու-

Թիւններու և հարստահարութիւններու հեղինակներ կամ պատճառներ: Իսկ յարաբերութիւնը հայերու հետ շատ քաղաքավարի ցոյց կը տար: Գիւղիս գլխաւոր աղաները հաւաքելով յայտարարեց՝ թէ աշխատանքներու և գէպքերու միջոցին պատահած բոլոր խնդիրները կամ դատերը չեղուած պէտք է համարուեն: Իսկ հաշտութենէ յետոյ գործաւորուած բոլոր սպաննութիւններու, կողոպուտներու և այլ գէպքերու նկատմամբ ինչ դատ կամ դժգոհութիւն որ ունէք բողոքադրով յայտնեցէք, որ պէտք է կարգադրեմ արդարութեամբ:

Մինչ հայերը բողոքադրեր կը պատրաստէին ներկայացնելու համար, միւլթէսարիֆը հեռագիր ստացաւ թէ Տաղլիի քուրդերը ապստամբել են և յարձակում են գործել տեղացի հայերուն վրայ: Տաղլի իսլամական փայտի արեւելեան կողմը, 9 ժամ հեռու կը գտնուի և լեռնային մի գաւառ է, ուր կը բնակին 25-30 հազար կիսավայրենի քուրդեր և երեք գիւղերու մէջ 200-250 տուն հայ կաթողիկէներ: Տաղլիի քուրդերը վերջերս տեսնելով և լսելով թուրք կառավարութեան անկարող և ընկած վիճակը, երկրի ամեն կողմը հրաբուխի նման պարբերաբար և մշտականապէս պայթած ապստամբութիւնները, որոնք հեռագրեալէ աւելի կենդանի և ծանր կերպարանք կը ստանան, իրենք ևս կը մտածեն ապստամբել և թալանուծներ անել: Ամենքը միացած վերջերս կը մերժեն տաւար սարմի ըստուած տուրքը վճարել և կը յարձակին հայերու և թուրքերու վրայ թալանուծներ անելու նպատակով: Մուլթէսարիֆ փաշան այստեղ գտնուած մի վաշտ զէրքերու կէսը հեռան առած շուտով մեկնեցաւ այդ տեղ՝ ապստամբութիւնը ճնշելու համար: Մարտի 25-ին փաշան վերադարձաւ տեղս, իբր թէ քուրդերու խռովութիւններու վերջ տուած է և այլ և այլ կարգադրութիւններ է արած:

Մուլթէսարիֆի վերադառնալէ յետոյ հայերու կողմէ 300-ի չափ բողոքագրեր սրուեցաւ թուրքերու մեղ հասուցած չարիքներու նկատմամբ, լաւ դիտնալով միանգամայն, թէ փաշան ունի զատ նպատակներ և չէ կարող ոչ մի օգուտ անել: Երբ 300-ի չափ բողոքագրերը մէկէն լեցուեցան իր առջև, առանց անոնց գործադրութեան նայելու, գաղտնի 20-Մարգուանի աղաներուն առաջարկեց մի մի հեռագիր տալ Կ. Պոլիս և Ատանայի կառավարութեան: Հեռագրի բովանդակութիւնը պէտք էր լինէր, թէ հերկար ժամանակէ հետէ տեղացի հայերս սաստիկ նեղութիւններ և հարստահարութիւններ կը կրէինք դրացի քուրդ և օտար ցեղերէն: Ճեպէլի նորնաթի մուլթէսարիֆը գտնով բոլոր ոճրագործներն ու յանցաւորները ձերբակալեց և պատժեց. թալանուած ապրանքները յետ վերադարձուց, այժմ 200-Մարգուանցիներս բողոքովին հանգիստ և բարեկեցիկ վիճակ ունենք շնորհով սուլթանի և իր արդարագատ կառավարութեան. օրհնութիւններ սուլթանի կենացը, և մասնաւոր շնորհակալութիւններ մուլթէսարիֆի անձի և իր բարեգործութեան համար ևն:

Աղա դատակարգէն մի յայտնի մաս, որոնց անունները այստեղ հարկ չենք համարել գրել, օգտուելով ժողովրդի տգիտութիւնէն և սոյն թշուառ կացութենէն, բոլորովին գաղտնի կերպով, կաշխատեն իրարմի հանել սոյն գործը և կառավարութեան մի ծառայութիւն մատուցանելու համար՝ ի չարը գործածել հասարակութեան կամքն ու կարծիքը: Սակայն, բարեբաղդաբար, այդ հեռագրի պատճէնը անցնելով հասարակութեան

յայտնի անձերու ձեռքը, որոնք սկիզբէն մինչև վերջ անձնութիւնութեամբ պաշտպանած են գիւղացիներու գործը և արդար իրաւունքները, իսկայն երեւան հանելով այդ դաւաճան աղաներու չար մտադրութիւնը բացարձակ կերպով արդեւք հանդիսացան անոնց առջև:

Այս միջոցներուն միւլթէսարիֆը ի մաս կանչելով հաց աղաներէ մի քանիսը կը յայտնէ թէ՝ մասնաւոր հեռագիր ստացայ, պէտք է շուտով վերադառնամ պաշտօնատեղիս մի քանի կարեւոր գործերու պատճառով և պահանջելով կը պատուիրէ թէ՝ իմ մեկնելէս յետոյ անպատճառ դուք պէտք է գրուել հանէք այդ խնդիրը և հեռագիրը ուղարկէք ուր որ հարկն է:

Միւլթէսարիֆի մեկնելէ յետոյ՝ յիշեալ աղաները իրենց արբանեակներու հետ միասին կաշխատին այդ խոստումի գործադրութեանը համար և հաւատարիմ հպատակներ գտնուելու սուլթանի և իր կառավարութեան առջև: Այդ ատեն հասարակութեան այն յայտնի անձերը, հետեւելով գիւղացիներու կոմքին՝ բացարձակ աղմուկ և խնդիր յարուցին բողոքովին խանգարելու համար այդ վնասակար գործը: Հասարակութիւնը զայրացած խոնուեցաւ գիւղի մէջ և ամեն կողմէ սպառնալիքի ձայներ կը լսուէին: Մի խումբ որը և այրի կիներ, որոնց գոյգերը կողոպտուած և բոլորովին մերկ ու անօթի մնացած էին, ուղղակի կը դիմեն Յ. Էֆէնտի տան առջևը և բարձր պոռոցներով նախատինքներ կարդալով կըղզուլացնեն իր այդ ընթացքի մասին, իսկ եթէ շարունակելու լինի միայն կիները պատրաստ են բզիկ բզիկ անելու իրեն: Այդ օրը ապրիլ 2 էր:

Հետեւեալ օրն այդ գլխաւոր աղաները հաւաքուեցան եկեղեցու խուցը, որ անպատճառ հասարակութեան կարծիքը շոյելով՝ աշխատեն մի կերպ վերջացնել այդ շնորհակալութեան թուղթը: Ժողովուրդն ևս խումբ խումբ դիմեց և ժողովուրդեաց եկեղեցու շուրջը: Սուլթանաժող աղաները ամեն ճիգ թափելին ժողովուրդը համոզել, երբեմն սպառնալիքներով, երբեմն խրատներ կարդալով: Գուրսը հարկւրներով խոնուած ժողովուրդը ոչ միայն չը համոզուեցաւ, այլ ընդհակառակը իրենց աղաներու այդ անբարոյական ընթացքն և անամօթութիւնը տեսնելով աւելի ևս կատաղեցաւ: Ժողովուրդը սպառնալիքներով խուժեց խուչէն ներս և իր գլխաւորներու բերանով յայտարարեց թէ՝ վերջնականապէս պէտք է թողուք այդ առանց իրագործելու: Աղաները սաստիկ վախեցած հեռացան խուցէն և ինչ որ հիմայ կը լսենք, խորհուրդ են արեւ այլ ևս չը խառնուել սոյնանման ժողովրդական գործերու և երբէք չը հակառակել հասարակութեան կամքին:

Արդէս կարեւոր մի դէպք հետեւեալը այստեղ կը յիշենք: Երկար ժամանակէ հետէ կառավարութեան և մի քանի թուրք աղաներու յայտնի թշնամութեան պատճառով փոխստական էր եղած Գրիգոր Թումպուլ Բէշլիշեան (սիւլիւկճի) անունով անձը: Սոյն վերջի կըռիւնների մէջ քաջաբար ժամանակցած և պաշտպանած էր իր գիւղը և գիւղացիները: Ապրիլ վերջերս իր հակառակորդ մի քանի թուրքերու մատնութեամբ, մի օր յանկարծ վեց ոստիկաններով կը պաշարեն իր տանը մէջ երբ դուռը կանգնած էր: Ոստիկանները կուղեն ձերբակալել Գրիգորը, սակայն նա օրիտակելի ճարպիկութեամբ կը մտնէ տունը և ղէմբերը առած կը յարձակի ոստիկաններու վրայ: Ոստիկանները տեղի

կուտան և Գրիգորը իր ղէնքով ճանապարհ բաց անելով՝ կանհետանայ գիւղի մօտը գտնուող անտառներու մէջ: Մի քանի վայրկեան ոտիկանները կուգն հետամուտ լինել, սակայն Գրիգորի կինը խոշոր քարեր նետելով կըբազնցնէ անոնց, մինչև իր էրիկ մարդու ապահով փախուստը:

Հետեւեալ օրը մի հարիւրապետ քառասունի չափ զինւորներով ուղարկուեցան փախստականը ձերբակալելու համար, սակայն ձեռնունայն վերադարձան:

Մայիսի սկիզբները տեղս գտնուած մի վաշտ զինւորներ իրենց սպաներով ճամբուեցան Արշաթ, որոնք զմուռնիացի և այտնցի ըէտիֆներ էին: Այժմ ասոնց տեղ եկած են 800 հօգիէ բազմացած մի վաշտ արաբախօս զինւորներ: Ասոնց խեղճութիւնն և ստորնութիւնը անպատմելի են. վրայի զգեստները պատառ պատառ են. ումանք փալթօ չունեն, ումանք փանթալօն, իսկ շատերն երկուքն ալ չունեն. գլխարկները հինգած, իւղոտած և ոտները բոլորովին բորիկ են: Ատենիքները երեկոյ առաւօտ միմիայն զգում է ապուր է և մէկ ամանը 16 հօգու կը բաշխուի: Զինւորներն ամբողջ օրը գետիները նետուած փառած ծիրանիները կը հաւաքեն և կուտեն: Տնէ տուն պտտուելով հաց, կերակուր, հին շապիկ ևն կը մօլբան: Հատ անգամ աներու գաւիթներէն ոտքի աման կամ հինգած շորեր կը գողնան: Գիւղացիները ձանձրացած իրենց սպաներուն կը գիմեն, սակայն սպաներն ևս զինւորներէն վար չեն մնար գողութեան, անամութեան և կամ խեղճութեան կողմանէ. ահա այս է ուղիքան չամիտի զինւորներու վիճակը՝ մինչև երեկոյ անօթի և բոլորովին մերկ: Վ.

Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Ի Ց.

Վ. Պօլիս, 3 յուլիս 1896.

Այլ և այլ աղբիւրներէ կիմացուի թէ՛ Նիկ-Հիսարի մէջ մի մեծ ջարդ է տեղի ունեցեր. մանրամասնութիւնը գեռ կը պակսի. թուրքերու ասելով կոտորածը երկուստեք է և կը կարծուի թէ մօտաւորապէս 500 մարդիկ սպաննուած են:

Առաւարտութիւնը կը շարունակէ Պօլսէն արքայել գաւառացի հայերը. երկու օր առաջ ութսունի չափ հայեր արքայութեան առանց պատճառի և չը գիտցուիր որ տեղի համար:

Չորեքշաբթի առաւօտ անմեղ հայու մը մահուան վճիռն ալ գործադրուեցաւ. Ուղուրլեան Համբարձումի տէնօրին տեղ՝ որ յաջողած էր փախչիլ արտասահման՝ կառավարութիւնը ձերբակալած է անմեղ մը, կօշկակար Ասատուրեան Գալուստը: Տարի մը բանտին մէջ չարչարելէ յետոյ, չորեքշաբթի առաւօտ կախաղան հանուեցաւ երիտասարդ Գալուստը փոխանակ Հնչակեան տէնօրին: Նաղըմը գիտէր որ Գալուստը անմեղ էր, այլ սակայն լուեց և թողուց որ անմեղի մը արիւնը թափուի:

1896 յուլիս 1-ին հայերու կողմէ ուղարկուեցաւ վեց Մեծ Պետութեանց դեսպանատներուն հետեւեալ ծանուցագիրը որ խիստ ապաւորութիւն թցղած:

«Տաճկաստանի ստորագրեալ հայերը այլ ևս ձանձրացած տաճկական կառավարութեան շարունակական հալածումներէն և չարամտաբար գրգռիչ ձեռնարկներէն, տաղակացած ամեն կարգի չարչարանքներէն, որ տեղի կունենան նոյն իսկ այն ժամանակ, երբ իրենց վիճակի հանգեպ այլ ևս անհրաժեշտ դարձած

բարենորոգմանց գործադրութեան համար հանդիսաւոր խոստում տրուած է, և վերջապէս յուզուած Վանայ մէջ տեղի ունեցած կոտորածներէն, ներկայիս կը ծանուցանեն Չերգ Վսեմութեան, որ առաւել քան երբէք որոշած են զիրենք ջախջախող տոյն բռնապետական լուծէն ազատիլ ու և միջոցով: Այժմէն կը յայտարարեն, որ Տաճիկ կառավարութիւնը պատասխանատու պէտք է մնայ այն ամեն կարգի հետեւեալներուն, որ առաջ կրնայ բերել ծայրայեղ ձեռնարկներու գործադրութիւնը, որոնց մղուած են հայերը յօստահատաբար իրենց վրայէն թօթափելու համար տաճկական բռնապետութիւնը:»

ՆԱՄԱԿ ԱՅՆԹԱՊԻՅ.

Այնթապ, 26 մայիս 96.

Այնթապ վերստին յուզուած է թուրք ժողովուրդը դամոկլէսի սուր մ' է հայի գլխին: Աւթը օր առաջ Ֆերման մը կարգացուեցաւ, որով 17-65 տարեկան բոլոր միւսթիմանները զինւորագրութեան մէջ պիտի մանեն, առանց օրինաւոր բացառութեանց իսկ անսալու: Այս Ֆերմանի վրայ թուրք խուժանը կը յուզուի և իր վրէժը վերստին կուզէ լուծել հայերէս. այսպէս 500-ի մօտ թուրք ժողովուրդ զինուած կը խմբուի Հէհրէ. քիւսէի թաղի մէջ և կը պատրաստուին յարձակուիլ հայոց վրայ: Այդ պարագային քաղաքիս տեղակալը և թուրք երեսելիները ժողով գումարելով որոշում են արեր երեք ժամ ևս կոտորած անել Այնթապի մէջ: Սակայն միջառայը անմիջապէս վտանգի առաջը կառնէ պաշարելով զինեալ խումբը, որով տեղակալն ալ կըստիպուի օժանդակել իրեն. բաւական խառնակութիւններ պատահեցան. ամբողջ օր մը պաշարեալ մնաց այդ խումբը. մէկ զինւոր սպաննուեցաւ: Վերջապէս զօրքերը աջողեցան գրգռուած խուժանը ցրուել և անոնց պարագլուխներէն երկու հօգի ձերբակալել, որոնք չալէպի բանտը ուղարկուեցան: Հայերէս 7-8 հօգի վերաւարուած և քաղաքի շրջակաները՝ այգեստաններու մէջ և այլ և այլ տեղեր 8 հօգի սպաննուած են: Այնթապ ամեն վայրկեան վտանգի մէջ է. թուրք գօմիթէի պետերը կոտորելապէս կը տիրեն քաղաքին, իբր տէրէպէտներ: Այն փոքրամասնութիւնը, որոնք կը պաշտպանէին հայերը, ստիպուեցան թողուլ Այնթապը և խումբ խումբ հեռանալ Հալէպ և ուրիշ տեղեր, իրենց կեանքը ազատելու յուսով:

Եղեւիտայէն վերագարձող Ահմետ Լուիֆի փաշան Հալէպէն մեկնեցաւ տեղս և կըսուի թէ մի քանի ամիս պիտի մնայ այստեղ այլ և այլ կարգադրութիւններ անելու համար: Եղեւիտայի մէջ կատարած կեղեքումները և անկարգութիւնները արդէն ծանօթ են, այստեղ ալ սկսաւ իր այդ աւերիչ ընթացքը: Այնթապի թալանուած ապրանքները ժողովելու համար սակարկութեան մօտ հայերի հետ քսան առ հարիւր իրեն տրուելու պայմանով. սակայն գեռ չէ համաձայնած քիչ ըլլալուն պատճառով, աւասիկ թուրք բարենորոգիչ փաշայի տիպար մը:

(Օրուայ նորութիւնն է տեղացի ժողովուրդները դադարեալ այս ու այն կողմ. ուր որ ապահովութիւն կը գրուէին: Մինչև այժմ Այնթապէն մօտաւորապէս 40-50 հայ ընտանիք եղաւ, որ գաղթեցին Հալէպ:

ԵՌԱՆԴ.

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԻՑ

Խարբերդ, 29 մայիս 96.

Անցեալ շաբաթ Տիգրանակերտէն տեղս հասան արգարու թեան վերաբննիչ անունով չորս թուրք պաշտօնականներ, որոնք մի քանի օր մնալով կըրկին վերադարձան Տիգրանակերտ:

Տեղացի թուրքերէ կիմանանք թէ այդ պաշտօնականներ մի քանի ատաղարկութիւններ են ըրեր իրենց, թէ թուրքիս կորստի վրայ է, Եւրոպան զանազան ծանր ատաղարկութիւններ կընէ սուլթանին. եթէ պատերազմ հրապարակուի պէտք է ամէն կարող անհատ պատրաստ լինի թշնաման գիմարդել. ամէն տուն, իր վիճակի համեմատ, յիսուն զրուշէն մինչև 100 ոսկի կառավարութեան վճարելու է և այլն: Տակաւին ուրիշ ատաղարկութիւններ ալ կան, սակայն զեւ տեղեկացած չենք: Թուրքերու ունեց ասածին նայելով՝ այդ ատաղարկութիւններու մասին ժողով գումարելով հետեւեալ իմաստով հեռագրած են Պոլիս «ամէն կարող անհատ վնասուող գումարէն պատրաստ ենք, պայմանաւ որ, քրիստոնեաներն ալ զինուորութեան գնան, որովհետեւ մեր տները անոնց չենք հաւատար: Պահանջուած 50 զրուշէն մինչև 100 ոսկի դրամ վճարել անկարող ենք և այլն»:

Գիւղերու մէջ նորանոր հարստահարութիւններ երևան կուգան. թուրք յանցաւորները դարձեալ անպատիժ կարճակուին:

Թուրք կռավարութիւնը իր տիմար խորամանկութեամբ այլ և այլ միջոցներու կը դիմէ սոյն բոլոր կատարածներու պատճառը Հայոց վերագրելու համար: Տգէտ և յիմար Ասորիներէն շատերը զոգեց, որ բողոքեն թէ Հայերը իրենց կողոպտեցին կամ բռնապանեցին. և երեւակայեցէք որ այդ փխմարները թէս հինգ օր առջ իրենց անարգար բողոքը իգործ գրին: Սինմաւ, ս. Կարապետ և ս. Ստեփանոս թաղերու ժողովուրդներէն 35 անձերու վրայ ի հստարիյէ (հրապարակ) բերել տուին, որ յունիս 6-ին հարցաքննութիւն տալու պիտի գնան: Բացի այս, իրենց ապրանքն կը քարոզէ թէ Հայոց բարե մի տաք, Հայոց բաղնիքն ու եկեղեցի մի գնաք և անոնց հետ առ և ատր մի ընէք և այլն: Թուրք կառավարութիւնը այս եղանակով իր անաւթի նպատակին հասած կը կարծէ:

Արաբիկէն, Մալաթիայէն տեղս բաւական թուով Հայեր բերւած են, իրր գէպքերու շարժառիթներ և բռնադատ: Այժմ կըստիպեն անոնց բոլր տալ թէ խռովութիւններ հանդէսը իրենք են և իրենք պատճառ դարձած կատարածներու: Արաբիկէն մի քանի Հայեր ևս բերւած են, որոնք իբր վկաներ կառավարութիւն կամքը պիտի հաստատեն: Վերջապէս այս օրեր շատ խառնաշփոթ վիճակ կը տիրէ այս կողմեր: Ներքին խնդիր մը կը դառնայ, սակայն չենք համար ինչ լինելու:

ՄՈՒՆ.ՋԸ.

ԴԻՊԼՈՄԱՆ ԹՈՒՐԿԻՆՆԵՐՈՒՄ.

Ամիս 14 ին քրիստոնեայ պատգամաւորները ներկայացուցին կրօնագրերի ատաղարկները բովանդակող մի յիշատակագիր Հայկապոյի դաշնագրութիւնը քարտաւարու մասին 13 յօդուածներով:

Հիմապատարի հաստատուելէ վերջ Կրէտէի զրուծիւնը անակնկալ կիրպով փոփոխուած է: Թուրքերը գիտազարքի խոստով բռնադատու են: Թրքական մարտայնաւոր ոչ միայն կրակ արած են փոխառուականներով լեցուած յունական մի նաւի վրայ և ուղեւորներին ծովեզերեայ մի քանի գիւղեր, այլ և կրակահօրեայ նաւային կուր ժամանակ սպաննուած 10 նաւաստիներ:

գիտակցեց ինտուէտ պատրուակով թիւը գիտուորները ստաշ խաղացին Քալիքէսն դէպի Ափսոսոնայ: Այստեղ պատգամները կողմէ հանդիպեցան բուն ընդհանրութեամբ: Երեմշաբթի օր կողից վերանորոգուել յիտայ թիւրքերն այլ եւս անկարող էին ստաշ խաղալ. պատերազմի մի երկար զօր վրայ էր տարածուած:

Վերջին եկած լուրերէ կը հաստատուի թէ գիտուորական իշխանութիւնը ինք տեղի կըտայ նորանոր դէպքերի եւ կը զրգոէ տեղացի մասնաւորականների միջնաւորութիւնն ու թշնամութիւնը: Ապտուլլահ փաշան դադարեցուց կը գինէ տեղացի մասնաւորականները եւ կը իրաւաւէ Վէնցիայի ամրոցի մէջ եղած պատըսպարաններն ու խուցերը մաքրել, վարկաւորող, որ հակառակ պարագային, երբ քաղաքը ուղեւորներէ, մասնաւորական ընտանիքները կարող լինին այդտեղ ապաստանիլ:

Կղզու գրեթէ բոլոր մասերի մէջ գիտազարքն է յարգուած թիւրքերու կողմէ: Անցեալ շաբաթայ մէջ թիւրքերը կրակի ուղիւ Ռաթիմ նահանգի մէջ գիտուոր շահուելիք եւ Ռաւանիս վանքը: Համիլթոն վարկաւորի մեջ Կրէտացիներ սպաննուած են: Նոյն դէպքերը կրկնուած են Հերակլիոնի մոտերը: Երկու Եւրոպական մարտանաւեր Գոնեսայն ծամայ ընկան յուզումների վայրը գնալու համար: Սուտայի ծոցին մէջ խաւիսի ծոցը Քրանսական մարտանաւի նրամանաւորը հաղորդած է Դանուայի հիւպատոսին թէ ինքն անհետ տեսած է երեք Կրէտական գիւղերի միջնաւորների վերածուելը:

Գոնեսայի հիւպատոսները հետազոտեցին իրենց կառավարութիւններին ծանուցանելով այդ գիտազարքի բռնադատութիւնը գիտուորների կողմէ եւ տեղացի մասնաւորականների գրգռութիւնը քրիստոնեաների դէմ: Սոսե պահանջեցին քննաւոր նրամանաւոր Ապտուլլահ փաշային փաշային հրամանաւր անհրաժեշտութիւնը. սակայն սուլթանի կառավարութիւնը ալ եւ այլ արարելութիւններով չէ ուզած մոտիկ գնել:

Թիւրք նախարարութիւնը անցեալ շաբաթ մի քանի օր պատարայ կարգի ժողովներ ունեցու Կրէտական ինդրի առթով: Այդ օրը եւրոպական տէրութիւնների ներկայացուցիչներն եւս ժողովուրդեան Գոնեսայէն եկած տաղեկագրերը նկատի առնելու համար: Այդ ժողովների մէջ ոչոքուեցան, որ Հաւէպայի դաշնագրութեան գիտուոր կէտիքին չը նուսնան եւ այդ իմաստով տեղեկութիւններ տուին Գոնեսայի իրենց հիւպատոսներին: Կրէտէի ապտուամբ ժողովուրդը աստիկ դժգոհ է եւրոպական տէրութիւնների այն բռնած անտարբեր ու անբարոյական ընթացքի նկատմամբ. մանաւանդ այն պատմաբան, որ եւրոպական պետութիւնները ամեն միջոց ի գործ կը դնեն ՀԱՄԵՆ կառավարութեան վրայ, որ արգիլին իր Կրէտացի եղբայրներուն ծնող կարկառու թրքական բռնութեան եւ Քրանսականութեան դէմ: Յունաստանի նախարարութիւնն կարծիք խիտ ծայր կը բարձրացնէ որ կը պահանջէ, որ ՀԱՄԵՆ կառավարութիւնը աւելի ազդու եւ գործնական ընթացք բռնէ ու պաշտպանէ Կրէտացի եղբայրների իրաւունքները:

Թիւրք գիտուորների եւ եւրոպական կառավարութեան տոյն ընթացքը պատճառ դարձան Կրէտի ամեն կողմերը նորանոր կոխերի եւ անբաւականութեան: Մի քանի օր ստաշ Արօսոնայի մէջ խիստ կոխ տեղի ունեցան, որ մինչև կէս գիշեր տեղացի: Թիւրքերը բողոքովն պարտուեցան: Թէթիսէն եկած լուրերը շատ լուրջ են. այդ կողմերը պատգամեցան ընդհանրութիւնը եւ չորս թրքական գիւղեր հրդեհուած են: Նորանոր խառնակութիւններ եւս տեղի ունեցան Գոնեսայի մէջ. քրիստոնեական հիւպատոսարարն ժողովներ կըստին, որ փոխի և քնի մասնաւորական սպաննուեցան. մի քանի եւս վիրաւորուածներ կան: Վերջին շաբաթայ մէջ թիւրքերի կորուստը շատ մեծ է. միայն Գոնեսայ 150 վիրաւորուած փոխաւորած են դարձան: Գոնեսայի մէջ թիւրքերը պատգամների կողմէ կրտական ցամաք հանուեցան երկու նաւերէ բազմաթիւ կամուրջներ. մի քանի հարիւր հրացաններ եւ մեծաքանակ ուղեւորներ: Այս շաբաթայ վերջերը կըստարուի 800 կամուրջներ եւս իրենց հրացաններով եւ փամիլուներով հանդեր:

Միակողմնային մէջ եւս յեղափոխական շարժումները գնալով աւելի տուր եւ սպաննական երկուրի կտտման: Մասնաւորական վրայ վրայ նոր-նոր խմբեր երևան կը գան: Սէլանիկէն ըստացուած լուրերի նայելով երկր յեղափոխական խմբեր քարծրացած են Ռօտօփ լեռների մէջ եւ գորտուր դիրք են բռնած: Թիւրք կառավարութիւնը պաշարած է այս իրար-երկուր ու կէս վաշտ գիտուորներով եւ լեռնային թնդանոթներով: Ապտուորների թիւը գնալով կըստարաւայ: Փէրէփի եւ մէրլիայի պոլիւարների մէջ կը շարունակուի գէպքի քրտուր Գուկար յեղափոխականների միջոցով: Միւս կողմէ թրքա-պոլիւարական սահմանագրուելը թիւրքերի կողմէ կը գորտուր նոր վաշտերով եւ կը գինեն տեղացի մասնաւորականները՝ ստաղայ ընդհանրութեան համար: 14 վաշտ ընտիրներէն 6-ը յունական սահմանագրուելը նստատուելու վրայ են:

Ինչպէս ծիտուէ եւ ուրիշ կողմեր, Նոյնպէս Սէլանիկի մէջ գտնուող սիւրբական մի վաշտ գիտուորները սպաննական: Սէլանիկի մէջ խառնութիւններ եւ սպաննակներ երևան կը գան հետզհետէ:

Թիւրքիայի Ֆինանսական դրութիւնը շատ անձուկ եւ կրիական է: Յաճախակի գումարի պակասութիւնը կըզգացուի: Երկար ամիսներէ հաւէ թէ գիտուորներ ու ոտակաւներ եւ թէ պաշտօնականներ ամսական չեն ստացու: Կառավարական շարժանակների մէջ դժգոհների թիւը հետզհետէ ստուարանալու վրայ է:

Յօդուածներ, թղթակցութիւն եւ տեղեկութիւններ և դրամ ու մանգատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].